



9932



378



ՀԿԸ

L-21

ար

ՀԱՅԱՍՏԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԼԵՆԻՆՑԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ՅԵՐԻՏԱ.ՍԱՐԴԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ

24 SEP 2008

1 DEC 2009

ԹՐԱԳԻՐՆ ՈՒ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա 92
15

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՑ

1937

01 JUN 2013

9932



299
37

Программа и устав Всесоюзного
Ленинского Коммунистического
Союза Молодежи.

Армпартиздат. Ереван, 1937

ՀԱՍԿԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ԸՆԴՈՒՆՎԱԾ Ե ՀԱՄԼԿՅԵՍ Խ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՂՄԻՑ
1936 թ. ապրիլի 21-ին

1. Թուսաստանի պրոլետարիատը 1917
թվականի Հռկտեմբերյան հեղափոխության
ժամանակ աշխատավոր գյուղացիության
աջակցությամբ, Կոմունիստական (բոլ-
շևեկների) կուսակցության և նրա
հիմնադիր Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ
տապալեց կապիտալիստների ու կալվածա-
տերերի իշխանությունը և հաստատեց իր
իշխանությունը—պրոլետարիատի դիկտո-
տուրան :

Հեղափոխություններ առաջ ել յեղել են :
Նրանք առաջ ելին մղում մարդկությունը,
սակայն սովորաբար վերջանում ելին շահա-
գործողների մի խմբակը շահագործողների
մի այլ խմբակով փոխարինելով : «Շահա-
գործողները փոխվում ելին, շահագործու-

մը մնում եր» (Ստալին) : Փարփղի կոմունան առաջին հեղափոխությունն եր, վորւնպատակ եր դրել տապալել ընդհանրապես շահագործողների տիրապետությունը : Նա պրոլետարիատի հերոսական, սակայն և այնպես անհաջող փորձն եր՝ հաստատելու իր դեկտասուրան : Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը ԽՍՀՄ-ում մյուս բոլոր հեղափոխություններից տարբերվում է նրանով, վոր նա իշխանության գլուխ կանգնեցրեց բանվոր դասակարգին, վոչնչացրեց մարդու ամեն մի շահագործում մարդու կողմից : «Նա իրեն նապատակ ե դնում վո՞չ քե շահագործման մի ձև ձևով, շահագործողների մի խումբը շահագործողների մի այլ լումբով կողմից մարդու ամեն մի շահագործում վոչնչացնելը, բոլոր և ամենանականի շահագործողական խմբերը վոչընչացնելը, պրոլետարիատի դիկտատորականատելը, մինչև այժմ գոյություն ունեցած նեշված բոլոր դասակարգերից ամե-

նակեղափոխական դասակարգի իշխանությունը հպատակելը, սոցիալիստական անդասակարգ նոր հասարակություն կազմակերպելը : Հենց այս պատճառով ել Հոկտեմբերյան հեղափոխության հնարքությունն արմատական բեկում ե նշանակում մարդկության պատմության մեջ, արմատական բեկում՝ համաշխարհային կապիտալիզմի պատմական նակատագրում, արմատական բեկում՝ համաշխարհային պրոլետարիատի ազատագրական շարժման մեջ, արմատական բեկում՝ ամբողջ աշխարհի շահագործվող մասսաների պայքարի յեղանակների ու կազմակերպման ձևերի մեջ, կենցագում ու տրադիցիաներում, կուլտուրայի ու գաղափարախոսության մեջ» (Ստալին) :

2. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունն ընդմիշտ վոչնչացրեց ԽՍՀՄ-ում կապիտալիստական ստրկության ու ճնշման իրավակարգը, այն իրավակարգը, վորը դեռ տիրապետում ե ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս, աշխարհի մյուս յերկիրներում :

Կապիտալիզմի պայմաններում կապիտա-
լիստների ու կալվածատերերի տիրապետու
ղասակարգը կազմող մարդկանց փոքր թիվն
իր ձեռքում կենարոնացնում և հասարակու-
թյան բոլոր հարստությունները, տիրապե-
տում և Փաքրիկաններին, դործարաններին,
հողին, յերկաթուղիններին ու ապրանքներին,
մինչդեռ ազգաբնակության հոկայական մե-
ծամասնությունը— պրոլետարներն ու կե-
սապրոլետարները,— զուրկ և ասրելու մի-
ջոցներից և հարկադրված և վաճառելու իր
աշխատանքային ուժը, այսինքն՝ վարձով
ծառայելու կապիտալիստներին ու կալվա-
ծատերերին, հարկադրված և ըստունելու
կապիտալիստական շահագործման լուծը և
իր աշխատանքով հարստություն ստեղծելու
կապիտալիստական ստրկատերերի համար:

Կապիտալիստական հասարակության զար-
դացմամբ, տեխնիկայի և աշխատանքի ար-
տադրողականության աճմամբ ավելանում
են այն հարստությունները, տնտեսական
ուժն ու զորությունը, վոր տնորինում են
կապիտալիստներն ու կալվածատերերը, և

միևնույն ժամանակ ավելանում է աշխատա-
վոր մասաների և առաջին հերթին բան-
վորների ու մանր գյուղացիների տնտեսա-
կան քայլայումը, աճում են աղքատու-
թյունն ու տառապանքները: Բանվորների
հսկայական և որըսագորե ավելացող մասսա-
ները, վորոնք չեն կարողանում վաճառել
իրենց աշխատանքային ուժը, կազմում են
դործազուրկների մշտական բանակը, վորը
կապիտալիստական հասարակակարգի ան-
խուսափելի ուղեկիցն և հանդիսանում :

Կապիտալիստական հասարակակարգի
պայմաններում առանձնապես ծանր և աշ-
խատավոր կանանց ու յերիտասարդության
դրությունը: Բուրժուազիան ամեն ինչ արել
և աշխատավոր կնոջը ճորտացնելու, նրա
արժանապատկությունն ստորացնելու հա-
մար, նվաստացրել և աշխատավոր կնոջը
մինչև ստրկուհու դրությունը: Աշխատավոր
կնոջ իրավազուրկ դրությունը բուրժուա-
կան հասարակության մեջ, նրա նյութական
չափահովվածությունը տանում են դեպի
պոռնկության զարգացումը:

Անստանելի յէ աշխատավոր յերիտասարը
դության գրությունը՝ զործազրկությունը
կիսաքաղց դոյլության և դատապարտում
նրան. զարգանում ե աշխատությունը և
չըջմութիւնումը: Ձեռնարկություններում
աշխատող գեռահասակներն ու յերիտասար
դությունն անդուսպ կերպով շահագործվում
են. նրանց աշխատանքի վարձատրությունը
չափազանց ցածր ե, աշխատանքային որը՝
յերկարատե, աշխատանքի պաշտպանության
բացակայություն, լիակատար կախումն տի-
րոջ ու վարպետի քմահաճույքից, գեռա-
հասակների աշխատանք գիշերային հերթա-
փոխություններում և առողջության համար
վնասակար ցեխերում. սոցիալական հի-
վանդությունները հյուծում են բանվորա-
կան, գյուղայիական ու ծառայող յերիտա-
սարդության ֆիզիկական ուժերը և քայլքա-
յում են նրա առողջությունը: Պատանիներն
ու աղջիկները զուրկ են կրթություն ստա-
նալու հնարավորությունից, ապրում են
աշխատանքից վտարվելու, սովոր ու աղքա-
տության յերկյուղի տակ: Յերիտասարդու-

թյունը կապիտալիստական հասարակության
մեջ աշխատավորության ամենաիրավա-
կուրկ մասն ե:

Կապիտալիստական հասարակակրկի
զարգացումը, վորակղ տիրապետում և
արտադրության անարխիան, վորտեղ յու-
րաքանչյուր կապիտալիստի միակ նպա-
տակն ե շահույթի հետեւց ընկնել,
վորտեղ կապիտալիստն իր շահույթն
ավելացնելու նպատակով ձգտում ե չնչին
չափի հասցնել բանվորի աշխատավարձը,
վորտեղ այդ պատճառով աշխատավոր մաս-
սաների սպառումը սահմանափակված ե
բանվորի կյանքի գոյության համար անհր-
ուաժեց միջոցների նվազագույնով, —այդ
հասարակակրկի զարգացումը պարբերա-
բար ուղեկցվում ե ամենազաժան ճգնաժա-
մերով: Ապրանքն ավելի յէ լինում, քան
կարող են դնել: Փակվում են ֆաբրիկաներն
ու գործարանները, և բանվորները փողոց
են նետպում: Կապիտալիստների պահեստնե-
րը ճայթում են ապրանքի ավելցուկից,
ապրանքի մի մասը վոչնչացվում ե, վորով-

Հետև չի կարելի վաճառել այն, —մինչդեռ միլիոնավոր բնակչությունը դատապարտված է սովորակության, վորովհետև նա միջոց չունի հաց, զգեստ գնելու, քնակարանի վարձ վճարելու:

Կապիտալիստական հասարակակարգն իմպերիալիզմի բարձրագույն և վերջին իր ստադիայում հանդում է իմպերիալիստական պետությունների միջն մղվող հափշտակողական պայքարի սրմանը: Իմպերիալիստները հափշտակում ու կողովառում են գաղութներն ու հետամնաց յերկիրները, ձնչում և ստրկացնում են հետամնաց ու թույլ ազգերին, ստրկացնում են Ասիայի, Աֆրիկայի, Հարավային Ամերիկայի ժողովուրդներին, պայքար են մղում միմյանց դեմ՝ ալելի շատ ավար հափշտակելու համար: Իմպերիալիստական պետությունները մարդկությանը նետեցին 1914—1918 թվականների կործանիչ և հրեշտավոր պատերազմի մեջ: Ապա նրանք ուղմանա արշավկազմակերպեցին մեր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության դեմ, վորը

վերջացավ ԽՍՀՄ-ի հաղթանակով: Նրանք անընդհատ պատերազմներ են մղել և մղում են Աֆրիկայում (Մարոկկո և Համիլիչստան), Մանչուրիայում, Հյուսիսային Չինաստանում: Ամենից ավելի դազանացած Փաշիստական իմպերիալիստական շրջանները նոր հարձակում են պատրաստում Խորհրդային Միության վրա: Կապիտալիզմի սխտեմի հետ անխղելիորեն կապված են նաև կողովադիչ պատերազմներն ու այդ պատերազմների պահանջած միլիոնավոր զոհերը, ճիշտ այնպես, ինչպես նրա հետ կապված են տնտեսական ճգնաժամերը և դաժան դորձադրկությունը:

3. Թուսաստանի պրոլետարիատը, դաշն կնքած աշխատավոր գյուղացիության հետ, համայն աշխարհի առաջավոր բանվորների ոժանդակությամբ, վոչ միայն ընկճեց տապալված դասակարգերի դիմադրությունը դաժան մարտերում և զենքը ձեռքին պաշտպանեց իր իշխանությունը, այլև անցյալում հետամնաց, ազգատ և քայքայված

յերկերը գաբճըց առաջավոր, հզոր և մեծ
սոցիալիստական պետություն:

Յերկրի սոցիալիստական վերակառուց-
ման հետևանքով, վոր բոլշևիկների կու-
սակցության ղեկավարությամբ իրականաց-
րին ԽՍՀՄ-ի աշխատավորները, ԽՍՀՄ-ի
դարձավ հզոր ինդուստրիայի և կոլեկտիվ
հողագործության յերկրի, հզոր պաշտպա-
նունակությունն ունեցող յերկրը, կատարե-
լապես ինքնուրույն և կապիտալիստական
յերկրների քահաճույքից անկախ յերկրի:

ԽՍՀՄ-ում վերացված են կապիտա-
լիստների, կալվածատերերի ու կու-
լակների պորտաբույժ դասակարգերը և
դրանով իսկ ընդմիշտ վերջ և դրված մար-
դու շահագործմանը մարդու կողմից: Իրա-
կանացված են սոցիալիզմի կարևորագույն
սկզբունքները՝ «չաշխատողը չի ուտի» և
«վարձատրությունը ըստ աշխատանքի»:
Աշխատանքն ինքը դարձավ պատվի, արիու-
թյան, փառքի ու հերոսության գործ:

Ֆաբրիկաներն ու գործարանները, գաղ-
պահներն ու մեքենաները—արտադրության

բոլոր միջոցներն ու գործիքները պատկա-
նում են վոչ թե կապիտալիստներին, այլ
աշխատավորներին, կազմելով աշխատավոր
ժողովրդի սրբազն, անձեռնմխելի հան-
րային սեփականությունը: Յերկրի ամբողջ
ժողովրդական տնտեսությունը սոցիալիս-
տական դարձավ: Նա ամբողջովին առաջ և
տարբում միասնական սոցիալիստական
պլանով: Յերկրի բոլոր հարստություննե-
րի, նրա ժողովրդական ամբողջ յեկամտի
բաշխումը կատարվում է հոգուտ աշխատա-
վոր մասսաների շահերի:

Միկոնավոր աշխատավոր գյուղացիներ
կամավոր կերպով միացել են կոլտնտեսու-
թյուններում և ընդունել են կոլտնտեսային
կյանքի ստալինյան կանոնադրությունը:
Վերջնականապես կտրվել են կապիտալիզմի
արմատները գյուղում: Վոչնչացվել ե այն
վիճը, վորով կապիտալիզմը բաժանել եր
քաղաքը գյուղից:

Խորհրդային յերկրը տնտեսական ճշնա-
ժամեր չգիտե: Վերացված և գործարկու-
թյունը—բանվոր դասակարգի այդ մշտնշե-

նական սպառնալիքն ու չարիքը։ Տարեցտարի աճում և աշխատավորների նյութական բարեկեցությունը։ Յուրաքանչյուր տշխատող դիտե, վոր նա սոցիալիստական հասարակության անդամն եւ նրա աշխատանքի արտադրողականությունն այլելացնում եւ Խորհրդային յերկրի հարստությունն ու գորությունը և միենույն ժամանակ ունեալ ու կուլտուրական կյանք և ստեղծում նրա համար։

Պրոլետարական սոցիալիստական մեծ հեղափոխությունն ազատագրեց նախկին Ռուսական կայսրության անցյալում ճնշված ժողովուրդներին։ Խորհրդային Միությունը ազատ և իրավահավասար ժողովուրդների յեղբայրական միությունն է։ Խորհրդային Միության մեջ չկան ճնշված ու ճնշող ժողովուրդներ։ Խորհրդային Միության բոլոր ժողովուրդները կողք-կողքի, ուսուությամբ կառուցում են սոցիալիզմ և պայքար են մղում ընդհանուր թշնամու դեմ, կապիտալիզմի դեմ։

ԽՍՀՄ-ում կինը դարձել և սոցիալիստա-

կան հասարակության ինքնուրույն և իրավահավասար աշխատավորուհի։ Տղամարդու և կնոջ իրական հավասարության հիման վրա ստեղծվում են նոր ընտանիք, վորի ծաղկման մասին հոգում և Խորհրդային պետությունը։

ԽՍՀՄ-ում աշխատավոր մարդը վստահություն ձեռք բերեց իր վաղված որվա նկատմամբ։ Մարդուն ցուցաբերվող հոգատարությունը դրված և կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության ու շաղը ության կենտրոնում։ Սոցիալիզմը կենսուրախություն և առույյություն բերեց իր հետ։ Աշխատավոր մարդուն առաջին անդամ վերադարձվեց նրա արժանապատվությունը, վորը վոտնահարում եյին տիրապետող շհագործողական դասակարգերը։

Յերիտասարդության աշխատանքի ու կրթության բոլոր արմատական հարցերը, վորոնք յերբեք չեն կարող լուծվել աշխատավոր յերիտասարդության համար կապիտալիստական իրավակարգի պայմաններում,



ԽՍՀՄ-ում արդեն լուծված են հոգուսոյ յիշ-
րիտասարդության :

Խորհրդային իշխանությունն ազատեց
ԽՍՀՄ-ի յերիտասարդությանն աղքատու-
թյան ու սովոր ծանր լծից և նյութական ա-
մուր ապահովածածություն տվեց նրան :
Խորհրդային իշխանության որենքներով 16
տարեկանից ցածր դեռահասակներն աշխա-
տում են որական չորս ժամ , իսկ 16-ից
մինչև 18 տարեկան յերիտասարդները՝ վեց
ժամ , լրիվ աշխատորի վարձատրությամբ :
Խորհրդային որենքներով արդելված և
առանց պետական որդանների հատուկ
թույլության կիրառել մինչև 18 տա-
րեկան յերիտասարդների աշխատանքն ստո-
րերկրյա և առողջության համար առանձ-
նապես ծանր աշխատանքներում (վնա-
սակար ու վտանգավոր արտադրություննե-
րում , տաք ցեխերում) : Արդելված ե դե-
ռահասակների արտաժամյա աշխատանքը :
ԽՍՀՄ-ում արտադրության սոցիալիստա-
կան բնույթը դեռահասակների աշխատանքը
զուգակցում ե նրանց անընդհատ ուսուցման

ու դաստիարակության հետ : Այդ նպատա-
կին են ծառայում ֆարբիկա-դործարանա-
յին աշակերտության դպրոցները (Փար-
դործուսները) : Յուրաքանչյուր դեռահասակ
աշխատանքի մտնելու առաջին որից ստա-
նում ե սահմանված աշխատավարձը : Քանի
ավելացնում ե նա իր գիտելիքները և ար-
տադրական վարժությունը , ավելանում ե
նրա աշխատավարձը :

Պետությունը վոչ միայն իր հաշվին սո-
վորեցնում ե գեռահասակներին , այլև իւր-
նամքով պահպանում ե նրանց առողջու-
թյունը : Այդ նպատակով արդելված ե աշ-
խատանքի ընդունել դեռահասակներին ա-
ռանց բժշկական նախնական քննության . ա-
մեն տարի բոլոր դեռահասակ բանվորները
յենթարկվում են բժշկական քննության ,
ստեղծվել ե հանդստի տների և սանատո-
րիաների լայն ցանց՝ աշխատավոր յերի-
տասարդության համար : Հատկապես
ստեղծված բուժական հիմնարկները պահ-
պանում են յերիտասարդությանը սոցիա-
կական հիվանդություններից , վորոնք ժա-

ուանգությունն են մնացել կապիտալիստական հասարակակարգից (տուրերկուլող, տրախոմա և այլն) :

Արմատապես փոխվեց գյուղացիական յերիտասարդության դրությունը : Կուլակության վերացման և կուտնտեսային կարգի ամրացման չնորհիվ չքացավ աղքատությունը գյուղում, դրա հետ միասին չքացավ գյուղի աշխատավորության անցյալում իրավագուրիկ և ճնշված խավը—չքավորությունը : Վոչնչացված և կուլակային ճորտությունն ու սորկությունը, յերեխա ու զեռահասակ բատրակների անորինակ շահագործումը : Կոլտնտեսային կարգը գյուղացիական յերիտասարդության համար աղատ աշխատանքի, լուսավորության լայն հնարավորություն ստեղծեց և հաղորդակից և գարձնում նրան քաղաքային կուտուրան : Հին, բուրժուական դպրոցի փոխարեն ստեղծված և նոր, խորհրդային դպրոց, վորտեղ բոլոր պայմանները կան՝ իսկական վորտեղիքներ ճեռք բերելու դիտության բոլոր բնակավառներում : Մացված և ընդհա-

նուր պարտադիր ձրի տարրական ուսում Տիկնչել 12 տարեկան բոլոր յերեխաների համար և հաջողությամբ իրականացվում է 7-ամյա ուսումը ԽՍՀՄ-ում բնակվող բոլոր աղբությունների մայրենի լեզվով :

ԽՍՀՄ-ի յերիտասարդությունը հնարավորություն ստացավ տիրապետելու իր ուղած մասնակիտությանը, հասնելու գիտելիքների ցանկացած մակարդակին, վորովհետեւ ԽՍՀՄ-ում բոլոր աշխատավորներին լայնորեն մատչելի յե վոչ միայն տարրական, այլև միջնակարգ ու բարձրագույն կրթությունը : Յերիտասարդության ընտրած յուրաքանչյուր մասնակիտությունը Խորհրդային յերկրում հարգանքում պատվագար ու հարգելի յե :

Սոցիալիզմն իրականություն և դարձել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների մեջ Միության բազմամիլիոն ժողովուրդների համար : Մաեղծվեց աշխատավորների սոցիալիստական հասարակություն, պայմաններ են նախապատրաստում սոցիալիզմից—կամունիստական

Հասարակության առաջին աստիճանից—
լիակատար կոմունիզմին անցնելու համար :

4. Բանվոր դասակարգը աշխատավոր
դյուղացիության հետ միասին հաղթեց մեր
յերկրում կապիտալիստներին, կարմածառե-
րերին, կուլակներին և սոցիալիզմ կառու-
ցեց միայն այն պատճառով, վոր նա բոլ-
շևիների կուսակցության զեկավարու-
թյամբ ստեղծեց իր ուժեղ ու հզոր իշխա-
նությունը, խորհրդային իշխանությունը,
բանվորների և դյուղացիների պետու-
թյունը :

Խորհրդային իշխանությունն ընկնեց աշ-
խատավորության թշնամիների դիմադրու-
թյունը, ջախչախեց նրանց բանակները քա-
ղաքացիական պատերազմում, ճնշեց և ճըն-
շում և դասակարգացին թշնամիների բոլոր
փորձերը՝ թուլացնել սոցիալիստական շի-
նարարության դորձը և վիճասել աշխատա-
վորներին :

Խորհրդային իշխանությունն ամենագե-
մոկրատական, ամենաժողովրդական իշխա-
նությունն է հանդիսանում, վորովհետեւ նա

պետական գործերն անմիջականորեն վարե-
լուն ներգրավում եւ ողետության կառա-
վարմանը մասնակից եւ դարձնում քաղաքի և
գյուղի բոլոր աշխատավորներին՝ անկախ
սեփից և ազգությունից :

Խորհրդային իշխանությունն ամրապնդե-
լով իր յերկրի պաշտպանումակությունը և
փառապանծ Կարմիր բանակը՝ աշխատա-
վորների հայրենիքը պաշտպանում եւ իմպե-
րիալիստական գիշատիչներից :

Խորհրդային իշխանությունը պահպանում
է հանրային սոցիալիստական սեփականու-
թյունը և խստիվ հետեւում եւ, վոր կատար-
վի «յուրաքանչյուրից ըստ ընդունակու-
թյունների, յուրաքանչյուրին ըստ աշխա-
տանքի» սոցիալիստական կանոնը :

Խորհրդային իշխանությունը արմատաց-
նում է կարգապահություն, հարդանք գե-
պի սոցիալիստական որենքներն ու համա-
կեցության կանոնները, բոլոր աշխատավոր-
ների մեջ դաստիարակում եւ ազնիվ վերա-
բերմունք գեսկի աշխատանքը և հասարակա-
կան պարտականությունը, առանց վորի չի

կարող իրականացվել սոցիալիզմի լիակատար հաղթանակը:

5. Համկ(բ)կ-ն և խորհրդային կառավարությունը կազմակերպում են կոմունիստական հասարակակարգ, այնպիսի հասարակակարգ, վորտեղ վոչ միայն չկա արտադրության միջոցների մասնավոր սեփականություն և վոչնչացված են դաստկարգերն ու մարդու շահագործումը մարդու կողմից, այլև վորտեղ կանհետանան մարդկանց տընտեսական անհավասարության վերջին մնացորդները, — վորտեղ աշխատանքը գոյության միջոցից դառնալու յե առաջնակարգ կենսական պահանջ, մարդու ստեղծագործ ընդունակությունների բերկրավից դրսերում, վորտեղ գիտության, տեխնիկայի, աշխատանքի արտադրողականության ծաղկման շնորհիվ հասարակությունը կհասնի այնպիսի առատության, այնպիսի հարցատության, վոր սոցիալիստական բաշխման «յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ աշխատանքի» սկզբունքը կփոխարինվի լիակատար

կոմունիզմի սկզբունքով, այն ե՝ «յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ պահանջմունքների»:

Այդ հասարակության մեջ վերջնականապես կանհետանա մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրությունը: Գիտությունը և արվեստը կհասնեն չտեսնված ծաղկման: Ամեն տեսակ կապանքներից ու կաշկանդումներից աղաստ մարդկային անձնավորությունը լիակատար հնարավորություն կտանա բազմակողմանի կերպով զարգացնելու իր տաղանդներն ու ընդունակությունները: Յուրաքանչյուր մարդ կամավոր կերպով կպահպանի համակեցության բոլոր կանոնները և կոմունիստական բարոյականության բոլոր նորմաները, վերջնականապես կանհետանա պետական իշխանության անհրաժեշտությունը:

Համամիութենական լենինյան կոմունիստական Յերիտասարդական Միությունը հանդիսանում է Համկ(բ)կ-ին հարող մասսայական անկուսակցական մի կազմակերպություն, իր շարքերում միացնում ե քա-

ղաքի և գյուղի առաջավոր, քաղաքականաց-
ութեա գրադեա աշխատավոր յերիտասարդու-
թյան լայն խավերը: ՀամլկօթեՄ-ի խնդիրն
և ողնել կոմունիտական (բոլցեկների)
կուսակցությանը՝ յերիտասարդությանն ու
յերեխաներին կոմունիզմի վորով դաստիա-
րակելու գործում: ՀամլկօթեՄ-ը, համա-
կրելով Համկ(բ)Կ-ի ծրագրին, ողնում և
բոլցեկների կուսակցությանը և խորհրդա-
յին կառավարությանը՝ կատարելու պատ-
մական մեծ խնդիրը—կոմունիտական հա-
սարակության կառուցումը:

ՀամլկօթեՄ-ը հանդիսանում է Համ-
կ(բ)Կ-ի ողնականն ու ոեղերլը:

ՀամլկօթեՄ-ն իր ամբողջ աշխատանքում,
Համկ(բ)Կ-ի ղեկավարությամբ, բանվորա-
կան, գյուղացիական, ծառայող յերիտա-
սարդությունից և յերիտասարդ ինսելիուն-
ցիայից դաստիարակում է խորհրդային իշ-
խանությանը նվիրված, կրթված մարդիկ,
խիզախ ու վճռական մարդիկ, վորոնք չեն
վախենում զրկանքներից ու դժվարություն-
ներից, մարդիկ, վորոնք ատում են բանվոր

դաստիարակի թշնամիներին, մարդիկ, վո-
րոնց համար «նովատակի պարզորոշությու-
նը, նովատակին հասնելու գործում աննկու-
նությունը և բնավորության հաստատակա-
մությունը, վոր վոնչացնում և բոլոր ու
ամեն տեսակ խոչընդոտները» (Ստալին),
հանդիսանում է նրանց դիմավոր հատկու-
թյունը:

Քաղաքի և գյուղի ամբողջ աշխատավոր
յերիտասարդությանը կոմունիզմի վորով
դաստիարակելու և նրան խորհրդային իշ-
խանության շուրջը կազմակերպելու համար
Համամիուրենական Լենինյան կոմունիտա-
կան Յերիտասարդական Միությունը հետև-
յալ խնդիրներն են դնում իր առջև.

I

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

1. Հետեւելով Լենինի այն ցուցումներին,
թե կոմունիտական աշխարհայացք մշա-
կելը—պրոլետարիատի գիտական-հեղափո-

իսական թեորիային աիրապետելը—հիմնական պայման ե յերիտասարդությանը կոմունիզմի վոկով գաստիարակելու համար, ՀամԼԿՅԵՄ-ը յուրաքանչյուր կոմյերիտականի համար պարտադիր ե համարում քաղաքական կրթություն ըստանալը։ Այդ նպատակով ՀամԼԿՅԵՄ-ն ստեղծում է գլոբոցներ, խմբակներ և իրականացնում է այլ ձեռնարկումներ, վորապես զի յերիտասարդությունը յուրացնի քաղաքական դրագիտություն, ուսումնասիրի ընդհանրապես պատմության և մանավանդ ԽՍՀՄ-ի և Համամիութենական կոմունիտական կուսակցության պատմության հիմնական մոմենտները, կազմակերպում ե Մարքսի-Ենգելսի-Լենինի-Ստալինի հիմնական գաղափարների ուսումնասիրումը յերիտասարդության կողմից։

2. ՀամԼԿՅԵՄ-ն աշխատանք ե կատարում բանվորական, գյուղացիական, ծառայող, ուսանող ամբողջ յերիտասարդությանը և յերիտասարդ ինտելիգենցիային քաղաքականապես դաստիարակելու համար։ Ժո-

ղովների, զրույցների, դասախոսությունների միջոցով ծանոթացնում ե նրան ընթացիկ քաղաքական անցքերին, Խորհրդային կառավարության և Համամիութենական կոմունիտական (բոլշևիկների) կուսակցության ձեռնարկումներին. ծանոթացնում ե յերիտասարդությանը բանվորների ու գյուղացիների անցյալ կյանքին կապիտալիստական յերկիրներում, քաղաքացիական պատերազմի պատմությանը ԽՍՀՄ-ում, դաստիարակելով յերիտասարդությանը կապիտալիստների ու կալվածատերերի գեմ բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության մղած հերոսական պայքարի որինակներով։

ՀամԼԿՅԵՄ-ը հրատարակում ե իր թերթերը, ժուռնալները, քաղաքական ու գեղարվեստական զրականություն, կազմակերպում ե յերիտասարդության ակումբներ և աշխատանք ե կատարում ընդհանուր բանվորական ու կոլտնտեսային ակումբներում, զրադարձաններում և ընթերցարաններում։

3. ՀամԼԿՅԵՄ-ը համբերատար կերպով

բացատրում ե յերիտասարդությանը սնու-
տիապաշտության և կրօնական նախապա-
շարժունքների վնասը, կազմակերպելով այդ
նպատակով հատուկ խմբակներ ու դասա-
խոսություններ հակակրոնական պրոպա-
գանդայի ուղղությամբ:

4. ՀամեկօթեՄ-ը դաստիարակչական
աշխատանք ե կատարում առաջ գոյություն
ունեցող ազգային անիրավահավասարու-
թյան մնացորդների դեմ, չովինիզմի, նա-
յիոնալիզմի ամեն տեսակ դրսեորումների
դեմ, ամբողջ յերիտասարդությանը դաս-
տիարակելով պրոլետարական ինտերնացիո-
նալիզմի վորով:

ՀամեկօթեՄ-ի կազմակերպությունները
քաղաքական - դաստիարակչական աշխա-
տանք են կատարում յերիտասարդության
մեջ՝ ԽՍՀՄ-ի ժողովուրդների մայրենի
լեզվով, համաձայն նրանցից յուրաքանչյու-
րի պայմաններին ու առանձնահատկու-
թյուններին:

5. ՀամեկօթեՄ-ը կազմակերպում ե դա-
նական դասընթացներ ու դպրոցներ՝ կոմ-

յերիտոմիության աշխատանքի տարրեր բնա-
դավառների համար պրոպագանդիստներ ու
կազմակերպիչներ պատրաստելու ու վերա-
պատրաստելու նպատակով:

II

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ Ա.ՍՊԱՐԵԶՈՒՄ

1. ՀամեկօթեՄ-ն իր ամբողջ աշխատան-
քում յելնում ե այն անհրաժեշտությունից,
վոր պետք ե «տիրապետել դիտությանը,
կերտել բոլցեիկ մասնագետների նոր կադ-
րեր դիտության բոլոր բնագավառներում,
սովորել, սովորել, սովորել ամենահամառ
կերպով» (Ստալին), ի. Վ. Ստալինի այն
ցուցումներից, թե անհրաժեշտ ե բանվոր
դասակարգի կուլտուրական-տեխնիկական
մակարդակը հասցնել ինժեներ-տեխնիկա-
կան աշխատողների մակարդակին:

2. Այդ նպատակով ՀամեկօթեՄ-ի կազ-
մակերպությունները —

ա) ոգնում են պետական որդաններին՝

ամբացնելու և զարգացնելու խորհրդային գլուխոցը, կենսագործելու ընդհանուր պարտադիր յոթնամյա, ապա նաև տասնամյա ուսումը.

բ) պետական և հասարակական որդանների հետ միասին կազմակերպում են յերեւասարդության միջնակարգ ընդհանուր տաեխնիկական կրթություն ստանալը՝ առանց արտադրությունից կտրվելու.

գ) ըստ ամենայնի ողնություն են ցույց տալիս ԽՍՀՄ-ում բարձրագույն կրթության զարդացման գործին (ինժեներների, բժիշկների, աղքանումների, մանկավարժների պատրաստումը և այլն).

դ) ակտիվ պայքար են մղում յերիտասարդության միջից անգրագիտությունն ու կետադրագիտությունը լիովին վերացնելու համար.

ե) կազմակերպում են զանազան տեսակի խմբակներ, դպրոցներ ու դասընթացներ՝ տեխնիկական և հանրակրթական գիտելիքները բարձրացնելու և ոտար լեզուներ ուսումնասիրելու համար.

զ) պայքար են մղում «ամենագետության» և գիտության ուսումնասիրմանը մակերեսային վերաբերմունք ցուցաբերելու դեմ, այնպես, վոր յուրաքանչյուր կոմյերիտական անգայման ուսումնասիրի վորմեամսնագիտություն, վորին պետք է տիրապետի կատարելապես:

III

ԴՊՐՈՑՈՒՄ ՅԵՎ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԵԶ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՍՊԱՐԵՁՈՒՄ

1. Ողնում է ժողովրդական լուսավորության որդաններին և ուսուցիչներին՝ ամրացնելու դպրոցական կարգապահությունը և կազմակերպելու դպրոցի ուսումնական ամբողջ աշխատանքը:

2. Պայքար է մղում հակաժողովրդական աղդեցությունները դպրոցի մեջ թափանցելու դեմ, պայքար է մղում խուլգանության ու թափթփվածության դեմ:

3. Սիստեմատիկաբար ծանոթացնում է աշակերտներին որվա կարևորագույն անց-

քերի հետ, կազմակերպելով զանազան տեսակի խմբակներ, դասախոսություններ ու զրույցներ :

4. Սովորող յերիտասարդության ամենաբարձրագույնի պահանջներին բավարարելու համար, ինքնաղործունեյության հիման վրա կազմակերպում ե Փիզիկական կուլտուրայի, յերաժշտական, դրամատիկական, Փոտո-և ռադիոսիրողների, մողելիստների, պատանի դյուտարարների խմբակներ և այլն :

5. Կազմակերպում ե աշակերտների հանդիսան ու խելացի ժամանցը (ինքնագործունեյության յերեկույթներ, կինոների, թատրոնների, թանգարանների այցելում, եքսկուրսիաներ, տուրիստական արշավներ և այլն) :

6. Ակտիվ մասնակցում ե ուսուցիչների պատրաստմանը, մանկավարժական աշխատանքի ուղարկելով իր լավագույն ուժերին :

7. Կազմակերպում ե դպրոցներում պիոներական ջոկատներ և հոկտեմբերի կիների խմբակներ :

8. Լավագույն կոմյերիտականների միջից ընտրում ե պիոներական ջոկատների ու Փորպատճենների ղեկավարներ, ջոկատներին ու Փորպատճեններին կից աշխատող զանազան խմբակների ղեկավարներ և անհրաժեշտ ոգնություն ե ցույց տալիս նրանց աշխատանքում :

9. Պրոֆմիությունների և ժողովրդական լուսավորության որդանների հետ միասին ստեղծում ե պիոներական ճամբարներ, մանկական ակումբներ, պալատներ, սպորտային հրապարակներ, սահատորիտումներ, մանկական տեխնիկական կայաններ և այլն :

10. Յերեխանների համար հրատարակում ե ղեղարվեստական և դիտական հանրամատչելի տեխնիկական գրականություն և հոդ և տանում, վոր արտադրվեն պիոներական սարքավորում, լավ խաղալիքներ և այլն :

ՅԵՐԻՑԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԶԱՐԴԱՑՄԱՆ ԱՍՊԱՐԵՁՈՒՄ

1. Կաղմակերպում և ամբողջ յերիտասարդության ներդրավումը Փիզիկական կուլտուրայի մեջ, ձգտում եւ, վոր ԽՍՀՄ-ն ունենա սպորտային լավագույն նվաճումներ :

2. Ակտիվ մասնակցում և Փիզիկական կուլտուրայի սկետական որդանների և հասարակական կաղմակերպությունների աշխատանքին, ստեղծելով զանազան տեսակի սպորտային կաղմակերպություններ :

3. Ակտիվ մասնակցում և սպորտային կառուցումների շինարարությանը (սպորտային հրապարակներ, ստագիոններ, սպորտային դահլիճներ, ավազաններ, աերոսակումքներ և այլն) և ոժանդակում և սպորտային ինվենտարի արտադրությանը :

4. Իր ուժերն և առանձնացնում Փիզիկական կուլտուրայի հրահանդիչների ու կաղ-

մակերպիչների կադրեր պատրաստելու համար :

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՍՊԱՐԵՁՈՒՄ

1. Հետևելով Համկ(ր)կ-ի այն ցուցումներին, թե յերիտասարդության կոմունիտական դաստիարակությունը պետք եւ կատարվի այնպես, վոր նրա ուսման ու կըրթության յուրաքանչյուր քայլը կավածվինի կոմունիտական հասարակություն ստեղծելու համար մզվող պայքարի հետ, չամկեթելու ամբողջ աշխատավոր յերիտասարդությանը մասնակից և գարձնում սոցիալիստական շինարարությանը : Համկեթելու կաղմակերպությունները յերիտասարդությանը պարզաբանում են սոցիալիստական շինարարության խնդիրները, ծանոթացնում են նրան ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման պլանի հետ. մասնակցում են Համկ(ր)կ-ի և խորհրդային

կառավարության անցկացրած քաղաքական կամպանիաներին . ըստ անհրաժեշտության մորեիլիցացիայի յեն յենթարկում իրենց ուժերը սոցիալիստական շինարարության աամենահարվածային ճակատամասերի համար . մասնակցում են խորհրդային որդանների առողյա աշխատանքին , ամրացնելով խորհուրդները . ողնում են խորհրդային իշխանությանը՝ պայքար մղելու խորհրդային և տնտեսական որդանների աշխատանքում գոյություն ունեցող բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ :

2. Համկանթեմ-ն ողնում ե բոլշևիկների կուսակցությանը՝ կազմակերպելու սոցիալիստական մրցությունը , նախաձեռնություն ու ձեռներեցություն ցուցաբերելով այդ գործում : Կոմյերիտականը պետք ե իր հարվածային աշխատանքով որինակ տա և դրանով գրավի ամբողջ յերիտասարդությանը : Համկանթեմ-ը կոմունիստական վերաբերմունք ե դաստիարակում դեպի աշխատանքը , բարեկարգությունը իշխանության ամրացման և աշխատանքային կարգապահության համար :

տականությունների կատարմանը , աշխատանքային գործունեյություն պահանջելով կոմյերիտականներից ու կոմյերիտուհիներից՝ յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների : Համկանթեմ-ը յերիտասարդության համար որինակ և բերում ավաղ ընկերների՝ հարվածայինների և հարվածայնուհիների հերոսական աշխատանքի և աշխատանքային սիրառդործությունների նըմուշները :

Համկանթեմ-ը պայքար ե մղում ձեռնարկություններում , տրանսպորտում , կոլտընտեսություններում , խորհանտեսություններում և հիմնարկություններում աշխատանքի արտադրողականության առավելագույն բարձրացման և աշխատանքային կարգապահության ամրացման համար :

3. Համկանթեմ-ն աշխատանք ե կատարում ամբողջ յերիտասարդությանը գաստիարակելու այնպիսի վոգով , վոր նոպահանի ու ամրացնի սոցիալիստական սեփականությունը , վորը հանդիսանում ե խորհրդային հասարակակարգի հիմքը :

4. ՀամԼԿՅՅԵՄ-Ն ողնում և խորհրդային
պետությանը՝ ամրացնելու ընտանիքը և հոգ-
տանելու յերեխաների ու մայրերի համար։
Պայքար և մղում կանանց նկատմամբ ար-
տաշայտվող՝ կապիտալիզմի մնացորդների
դեմ, յերիտասարդության մեջ հարգանքի
զգացմունք դաստիարակելով՝ դեպի կինը՝
վորպես սոցիալիստական շինարարության
իրավահավասար մասնակիցը։

VI

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ Ա.ՍՊԱՐԵԶՋԻՄ

1. Խորհրդային Միության յերիտասարդ
սերունդը պարտավոր և իրեն պատրաստել
պաշտպանելու իր հայրենիքը բոլոր վտանգ-
ներից և թշնամիների կողմից նրա դեմ
ուղղված վոտնձգություններից։ «Մենք
պաշտպանողականեր ենք սկսած 1917 թ.
նոյեմբերի 7-ից (հոկտեմբերի 25-ից)։
Մենք կողմնակից ենք «հայրենիքի պաշտ-
պանության», սակայն հայրենական այն

պատերազմը, դեպի վորս ընթանում ենք
մենք, մի պատերազմ և հանուն սոցիալիս-
տական հայրենիքի, հանուն սոցիալիզմի,
վորպես հայրենիքի, հանուն խորհրդային
հանրապետության, վորպես սոցիալիզմի
համաշխարհային բանակի մի զոկատի» (Լե-
նին)։ Աննահանգ կերպով հետևելով մեծ
լենինի այդ ավանդին, ՀամԼԿՅՅԵՄ-Ը յերի-
տասարդ սերունդը դաստիարակում է խոր-
հրդային հայրենասիրության վոդով, ան-
հուն նվիրվածությամբ և անսահման սիրով
դեպի ԽՍՀՄ-Ն—իր հայրենիքը։ Անձնվիրա-
բար պաշտպանել սոցիալիստական հայրե-
նիքը, ամրացնել նրա զորությունը, բար-
գավաճումն ու փառքը—ՀամԼԿՅՅԵՄ-ի ան-
դամի ամենասրբազան ու կենսական պար-
տականությունն է։

ՀամԼԿՅՅԵՄ-Ը յերիտասարդությանը դաս-
տիարակում և այնպիսի վոդով, վոր նա
պատրաստ լինի խորհրդային կառավարու-
թյան առաջին խոկ կոչով պայքարի գուրու-
թալ սոցիալիստական հայրենիքի թշնամի-
ների դեմ։

2. ՀամլկօթեՄ-ը յերիտասարդության մեջ դաստիարակում ե քաջություն ու անհողողություն, արհամարհանք դեպի վախկոտությունն ու յերկյուղը խորհրդային իշխանության թշնամիների հանդեպ, ամենաիիստ կարգավահության վոգի։ ՀամլկօթեՄ-ը յերիտասարդությանը դաստիարակում ե ատելություն տածելու վոգով դեպի դասալքությունը, մատնությունը, դավաճանությունը սոցիալիստական հայրենիքին, վորպես ամենածանր ու ստորչար ամենության շահերի դեմ։ ՀամլկօթեՄ-ի անդամները և ամբողջ յերիտասարդությունը պետք ե մերկացնեն և բանվորա-գյուղացիական պետության դատաստանին հանձնեն բոլոր նրանց, ովքեր կդավաճանեն հայրենիքի շահերին։

3. ՀամլկօթեՄ-ը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պաշտպանունակությունն ամրացնելու ուղղությամբ իր կատարած ամբողջ աշխատանքում յելնում է Համկ(բ)Կ-ի և խորհրդային

կառավարության այն քաղաքականությունից, վոր «մենք կողմնակից ենք խաղաղությանը և պաշտպանում ենք խաղաղության գործը։ Սակայն մենք չենք վախենում սպառնալիքներից և պատրաստ ենք հարվածով պատասխանելու պատերազմի հրձիգների հարվածին» (Ստալին)։ Ակտիվ կերպով ոժանդակել խորհրդային պետությանը՝ ամրացնելու և զարգացնելու զինված ուժերը—լենինյան կոմյերիտմիության կարևորագույն պարտականությունն ե։ Այդ նպատակով ՀամլկօթեՄ-ը չեֆություն ե կատարում բանվորա-գյուղացիական կարմիր բանակի ռազմական պատությանը և ռազմապատճեն ուժերի նկատմամբ և ապահովում ե բանվորա-գյուղացիական կարմիր բանակը խորհրդադարին իշխանությանը նվիրված մարդկանց այնպիսի կադրերով, վորոնց ձեռքը չի դողա և աչքը չի դավաճանի հեղափոխական ժողովրդի թշնամիների դեմ մղվող մարտերում։

ՀամլկօթեՄ-ը յերիտասարդության մեջ ռազմական դիտելիքների պլոտագանդա յե

մղում, ակտիվ մասնակցում և պաշտպանության հասարակական կազմակերպությունների աշխատանքին և ձգտում եւ, վորյուրաքանչյուր կոմյերիտական դեռ բանակի ու նախատորմի շարքերը մտնելուց առաջ տիրապետի դիպուկ հրաձգության արվեստին, ուսումնասիրի ուղղմական մասնակիտություններից մեկը:

* * *

Համամիութենական կոմունիստական Յերիտասարդական Միությունը կրում է համայն աշխարհի աշխատավորության ուսուցչի ու առաջնորդի՝ Ա. Ի. Լենինի անունը:

Լենինյան կոմյերիտմիությունը կապիտալիստների, կարգածատերերի, ինտերվենտների դեմ մղված քաղաքացիական պատերազմում իր մատուցած մարտական ծառայությունների համար արժանացել է հեղափոխական բարձրագույն պարզեցմարտական կարմիր դրոշի շքանշանի:

Սոցիալիստական հասարակության կա-

ռուցման ասպարեզում իր կատարած հարվածային աշխատանքի համար, վորը փառքով պատկեց Խորհրդային Միության աշխատավոր յերիտասարդությանը, լենինյան կոմյերիտմիությունը պարզեատրվեց Աշխատանքային կարմիր գրոշի շքանշանով։

Լենինյան կոմյերիտմիությունն իր աշխատանքը կատարելով ԽՍՀՄ-ի աշխատավոր յերիտասարդության մեջ, Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության դեկալարությամբ, հավատարիմ Մարքսի-Ենդելսի-Լենինի-Ստալինի ուսումնառներին, պատվով կկատարի սոցիալիստական հայրենիքի հանդեպ ունեցած իր բոլոր պարտականությունները։

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼԵՏԻՆՅԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՎԱՐԴԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԴՈՒՆՎԱԾ Ե ՀԱՍԼԿՅԵՄ Խ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՂՄԻՑ
1986 թ. ապրիլի 21-ին

ՀամլկթեՄ-ը Յերիտասարդական Կոմունիստական ինտերնացիոնալի ջոկատներից մեկն ե , ընդունում ե նրա ծրագիրն ու կանոնադրությունը , կատարում ե նրա վորոշումները և ակտիվ կերպով մասնակցում ե նրա աշխատանքին :

ՀամլկթեՄ-ը հարում ե Համկ(բ)կին , հանդիսանում ե նրա ռեզերվն ու ոգնականը : Բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ ՀամլկթեՄ-ը յերիտասարդությանը դաստիարակում ե կոմունիզմի վորով , նրան համախմբում ե խորհրդային եշխանության շուրջը :

ՀամլկթեՄ-ը մասսայական անկուսակցական կազմակերպություն ե , վորն իր շարքերում համախմբում ե քաղաքի և գյուղի առաջավոր , քաղաքականապես դրագետ

աշխատավլոր յերիտասարդության լայն իսա-
վերին։ Հետևելով բոլցելիզմի մարտական
տրագիցիաներին, կոմյերիտմիությունն ու-
ժեղ և իր գաղափարական համոզվածու-
թյամբ և նվիրվածությամբ՝ լենինի-Ստա-
լինի կուսակցությանը։ Վորեե չեղում համ·
ԼԿՅՅԵՄ-ի ծրագրից՝ անհամատեղելի յե-
կոմյերիտմիության մեջ մնալու հետ։

ՀամԼԿՅՅԵՄ-ն իր անդամներից պահան-
ջում և հաստատակամ և աննկուն պայքար
մղել հանուն բոլցելիկների կուսակցության
գլխավոր գծի իրականացման։ ՀամԼԿՅՅԵՄ-ի
անդամները պարտավոր են ամբողջ ուժով
ամրացնել խորհրդային հասարակակարգը,
ամրացնել խորհրդային արդյունաբերու-
թյունն ու տրանսպորտը, կոլանտեսու-
թյուններն ու խորհտնտեսությունները, ան-
հաշտ պայքար մղել դասակարգային թշնա-
մու և ամեն գույնի ոպորտունիստների գեմ,
անողոք հակառարված տալ կոմյերիտմիու-
թյունը բոլցելիկների կուսակցությանը հա-
կադրելու ամեն տեսակ փորձերին, ամրաց-
նել յեղբայրական ինտերնացիոնալ հարաբե-

րությունները ԽԱՀՄ-ի բոլոր ազգերի աշ-
խատավորների և բոլոր յերկիրների պրոլե-
տարների միջև։

Կոմյերիտականը մեծագույն պատիվ ե
համարում իրեն համար ՀամԿ(բ)Կ-ի ան-
դամ դառնալն ու իր ամբողջ գործունեյու-
թյամբ և ուսմամբ իրեն նախապատրաս-
տում և նրա շարքերը մտնելու համար։

I

ՀԱՄԼԿՅՅԵՄ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՒ ԹԵԿՆԱ-
ԾՈՒԽՆԵՐԻ ՑԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒ-
ԹՅՈՒԽՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ՀամԼԿՅՅԵՄ-ի անդամ և համարվում
կոմյերիտմիության շարքերն ընդունված
յուրաքանչյուր վոք՝ 15-ից մինչև 26 տարե-
կան, վորն ընդունում է միության ծրագիրն
ու կանոնադրությունը, աշխատում ե նրա
կազմակերպություններից մեկում, յեն-
թարկվում և ՀամԼԿՅՅԵՄ-ի բոլոր վորո-
շումներին և մուծում ե անդամավճար։

Մանօքություն. — ՀամԼԿՅՅԵՄ-ի 26 տա-

րեկան հասակի հասած անդամները
կարող են մնալ կազմակերպության մեջ
խորհրդակցական ձայնի իրավունքով,
իսկ ղեկավար մարմիններում ընտրվե-
լու ղեղփում նրանք պահպանում են
վճռական ձայնի իրավունքը:

2. Համեկցե՛Մ-ի անդամները պարտավոր
են՝

ա) ուսումնասիրել Մարգսի, Ենդելսի,
Լենինի, Ստալինի աշխատությունները և
մարգսիստական-լենինյան ուսմունքը պար-
զաբանել յերիտասարդության լայն մասսա-
ներին.

բ) կատարել բոլեկիկների կուսակցու-
թյան ու կոմյերիտմիության վորոշումները
և ակտիվ կերպով մասնակցել յերկրի քա-
ղաքական կյանքին.

գ) աշխատանքի նկատմամբ սոցիալիստա-
կան վերաբերմունքի որինակ ցույց տալ,
աշալուրջ պահպանել սոցիալիստական սե-
փականությունը, պայքարել հարբեցողու-
թյան, խուլգանության ղեմ, կոռոնական
նախապաշտամունքների մնացորդների ղեմ,

կնոջ նկատմամբ վուշընկերական վերաբեր-
մունքի ղեմ.

դ) տիրապետել գիտելիքներին, կուլտու-
րային, գիտությանը, տեխնիկային.

է) ուսումնասիրել ուսղմական գործը,
անձնազուհ կերպով նվիրված լինել սոցիա-
լիստական մեծ հայրենիքին և պատրաստ
լինել տալու նրան իր բոլոր ուժերը, իսկ
յեթե անհրաժեշտ լինի—նաև կյանքը.

զ) վճռականորեն պայքարել հեղափոխա-
կան որինականության ու կարգի խախտում-
ների ղեմ.

է) ակտիվ կերպով մասնակցել կոմյերի-
տական կազմակերպության աշխատանքին,
կանոնավոր հաճախել կոմյերիտական ժո-
ղովները, արագորեն ու ճշգրիտ կատարել
կազմակերպության առաջադրանքները,
սկսած յուրաքանչյուր գործը հասցնելով
մինչև վերջ:

3. Կոմյերիտմիության անդամ ընդուն-
վում և առաջապոր, ստուգված, խորհրդա-
յին իշխանությանը նվիրված յերիտասար-

դությունը՝ բանվորների, դյուղացիների և
ծառայողների միջից :

Այն գեղքում, յերբ կոմյերիտմիության
շարքերն ընդունվել ցանկացողը գեռևս բա-
վարար չափով պատրաստված չե Համ .
ԼԿՅՅԵՄ-ի անդամ ընդունվելու համար, նա
ընդունվում է թեկնածու՝ վեց ամիս ժամա-
նակով : Թեկնածուական ստաժը նրա հա-
մար և սահմանվում, վորպեսզի կոմյերիտ-
միության մեջ ընդունվել ցանկացողը պատ-
րաստվի այդ բանի համար, ծանոթանա
Համ ԼԿՅՅԵՄ-ի ծրագրին ու կանոնադրու-
թյանը և վերացնի իր քաղաքական անդրա-
գիտությունը : Ընդունելությունը կոմյե-
րիտմիության մեջ կատարվում է անհատա-
կան կարգով .

ա) Համ ԼԿՅՅԵՄ-ի անդամ կամ թեկնածու
ընդունվողները ներկայացնում են կոմյե-
րիտմիության մեկ տարվա ստաժ ունեցող
յերկու անդամի, կամ կուսակցության մեկ
անդամի յերաշխավորություն :

Յերաշխավորություններն ստուգում ե
կոմյերիտմիության տեղական կոմիտեն

անպայման մինչև ընդունելության հարցի
քննարկումը :

Յերաշխավորողները պատասխանատու յեն
իրենց յերաշխավորյալի համար, անհիմն
յերաշխավորության դեղքում յենթարկվե-
լով միութենական սույժի՝ ընդհառուղ մինչև
կոմյերիտմիությունից հեռացվելը :

բ) Կոմյերիտմիության մեջ ընդունելուն
պետք է նախորդի այն հիմնական տվյալ-
ների նախնական ստուգումը, վոր հաղոր-
դում և իր մասին ընդունվողը, և ընդու-
նելության հարցը քննության և առնվում
սկզբնական կոմյերիտական կազմակերպու-
թյան կոմիտեյի կողմից, լուծվում է սկզբո-
նական կազմակերպության ընդհանուր ժո-
ղովի կողմից և ուժի մեջ և մանում կոմյե-
րիտմիության ըրջկոմի կամ քաղկոմի բյու-
րոյի հաստատումից հետո :

Համ ԼԿՅՅԵՄ-ի անդամների ու թեկնածու-
ների ստաժը հաշվում է այն սրվանից,
յերբ համապատասխան կոմյերիտական
սկզբնական կազմակերպության ընդհանուր

ժողովը վորոշում ե կայացրել ընդունելության մասին:

4.) Թեկնածուից անդամ փոխադրելու ժամանակ կոմյերիտական կազմակերպությունները պետք ե ստուգեն, թե տվյալ թեկնածուն պատրաստ ե արդյոք կոմյերիտմիության անդամ ընդունվելու համար։ Այն դեպքում, յերբ թեկնածուն իրեն յերեան չի բերել իրոք լենինյան կոմյերիտմիության անդամի կոչման արժանի, կազմակերպությունն իրավունք ունի յերկարացնել նրա թեկնածուական ստաժը կամ թե հեռացնել նրան թեկնածությունից։

4. Համկանական անդամներն ու թեկնածուները մեկ կազմակերպությունից մյուսն անցնելիս վերջին կազմակերպության մեջ հաշվի յեն առնվում միայն կոմյերիտական անդամատօմը և անձնական քարտը ներկայացնելու դեպքում, վորի մեջ պետք ե նշում լինի հաշվառումից դուրս դալու վերաբերյալ։

5. Կոմյերիտական կազմակերպությունները պետք ե վերահսկողություն ստհմանեն

կոմյերիտմիության անդամների ու թեկնածուների կողմից անդամակները ժամանակին մուծելու նկատմամբ, յուրաքանչյուր առանձին դեպքում պարզեն անդամակները ժամանակին չմուծելու պատճառները։

Կոմյերիտմիության յերեք ամիս անդամակները չմուծած անդամների ու թեկնածուների՝ համկանական չարքերում մնալու հարցը քննության ե դրվում սկզբանական կազմակերպության ժողովում։

6. Կոմյերիտական կազմակերպությունները պետք ե իրենց չարքերը մաքրեն թըշնամական տարրերից, յերկերեսանիներից, կոմյերիտմիության յերկաթե կարգապահությունը խախտողներից, բարոյապես գայքայլածներից, մորթապաշտներից, կարյերիտաներից։

7. Կոմյերիտմիությունից հեռացնելու հարցը լուծվում է կոմյերիտմիության այն սկզբանական կազմակերպության ընդհանուր ժողովում, վորի անդամը կամ թեկնածուն ե հանդիսանում տվյալ անձնավորությունը,

և Հաստատվում ե կոմյերիտմիության շըրջ-
կոմի կամ քաղկոմի բյուրոյի կողմից :

8. ՀամԼԿՅՅԵՄ-ի անդամության թեկնա-
ծուները յենթարկվում են միության բոլոր
վորոշումներին և կատարում են իրենց վրա
դրված բոլոր պարտականությունները :

Թեկնածուները ժողովներին մասնակցում
են խորհրդակցական ձայնի իրավունքով,
բայց չեն կարող ընտրել կամ ընտրվել
միության ղեկավար մարմիններում :

ՀամԼԿՅՅԵՄ-ի անդամության թեկնածու-
ներն անդամակցար մուծում են Համ.
ԼԿՅՅԵՄ-ի անդամներին համահավասար :

II

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

9. Կոմյերիտմիության կազմակերպական
կառուցվածքի ղեկավար սկզբունքն ե գե-
մոկրատական ցենտրալիզմը, վորը նշանա-
կում ե՝

ա) կոմյերիտմիության բոլոր ղեկավար

մարմինների ընտրականություն՝ վերեկց
մինչեւ ներքեւ.

բ) կոմյերիտական մարմինների պարբե-
րական հաշվետվությունը իրենց կոմյերի-
տական կազմակերպությունների առաջ.

գ) կոմյերիտական խիստ կարգապահու-
թյուն և փոքրամասնության յենթարկումը
մեծամասնությանը.

դ) կոմյերիտական վերադաս մարմինների
վորոշումների անվերապահորեն պարտադիր
վիճելը ստորին մարմինների և կոմյերիտ-
միության բոլոր անդամների համար :

10. Կոմյերիտմիությունը կառուցվում է
դեմոկրատական ցենտրալիզմի հիմունք-
ների վրա ըստ տերիտորիալ-արտադրական
հատկանիշի. Կոմյտեն տերիտորիալ կազ-
մակերպության բարձրագույն մարմինն է
այդ շրջանի մեջ մանող բոլոր (տերիտո-
րիալ) կազմակերպությունների համար.
արտադրության կոմ կառավարման մի ամ-
բողջ ձյուղի սպասարկող (տրանսպորտ,
քաղաքացիական սվիացիա և այլն) կազմա-
կերպությունները բարձրագույն են հանդի-

սանում տղյալ ճյուղի կոմյերիտմիության
բոլոր կազմակերպությունների նկատմամբ:

11. Կոմյերիտմիության կազմակերպական
սխեման հետեւյալն է.

ա) ԽՍՀՄ-ի տերիտորիա—համամիութե-
նական համագումար—ՀամկցեՄ-ի կենտ-
կոմ.

բ) մարդեր, յերկրամասեր և հանրապե-
տություններ—մարդային, յերկրային կոն-
ֆերենցիաներ, ազգային հանրապետու-
թյունների կոմյերիտմիության համագու-
մարներ—մարդկոմներ, յերկրկոմներ, ազ-
գային հանրապետությունների կոմյերիտ-
միության կենտկոմներ.

գ) քաղաքներ, շրջաններ—քաղաքային,
շրջանային կոնֆերենցիաներ—քաղաքային,
շրջանային կոմիտեներ.

դ) ձեռնարկություններ, դյուզեր, կոլ-
տնտեսություններ, մեքենա-տրակտորային
կայաններ, կարմիր-բանակային զորամա-
սեր, հիմնարկություններ, պարոցներ—ընդ-
հանուր ժողովներ—կոմյերիտական կոմի-
տեներ (գործարանի կոմյերիտմիության

կոմիտե, Փարբեկայի կոմյերիտմիության
կոմիտե, բարձրագույն ուսումնական հաս-
տառության կոմյերիտմիության կոմիտե և
այլն):

12. Բարձրագույն ինստանցիայից դեպի
ստորինը յենթարկման և հաշվետվության
կարգը հետևյալն է. Համամիութենական
համագումար—ՀամկցեՄ-ի կենտկոմ.
մարդային, յերկրային կոնֆերենցիա, ազ-
գային հանրապետությունների կոմյերիտ-
միության համագումար—մարդկոմ, յերկըր-
կոմ, ազգային հանրապետության կոմյե-
րիտմիության կենտկոմ. քաղաքային, շրջանա-
յին կոնֆերենցիա—քաղաքային, շրջանա-
յին կոմիտե և այլն:

13. Կոմյերիտմիության յուրաքանչյուր
շրջանային ու վերապատճենի ունի իր
կնիքը՝ ՀամկցեՄ-ի կենտկոմի սահմանած
ձևով:

14. Յերիտասարդության դանազան խըմ-
բերի մեջ դաստիարակչական աշխատանք
կազմակերպելու համար կոմյերիտմիու-
թյան շրջկոմներում, քաղկոմներում, մարդ-

կոմներում, յերկրկոմներում ու աղղային
հանրապետությունների կենտկոմներում
ստեղծվում են ՀամԼԿՅԵՄ-ի կենտկոմի
սահմանած համապատասխան բաժիններ ու
սեկտորներ :

ՀամԼԿՅԵՄ-ի կենտկոմում ստեղծվում են
բաժիններ, սեկտորներ և բաժիններին կից
խորհուրդներ՝ ՀամԼԿՅԵՄ-ի կենտկոմի հա-
յեցողությամբ :

15. Կոմյերիտական կազմակերպություն-
ները դպրոցներում ստեղծում են պատանի
պիոներների՝ Վ. Ի. Լենինի անվան ման-
կական կոմունիստական կազմակերպու-
թյուններ, իսկ բնակվարձկոոպներում՝ պիո-
ներական Փորպատճեր, վորոնք աշխատում
են կոմյերիտմիության անմիջական դեկա-
վարությամբ :

Մանկական կոմունիստական կազմակեր-
պությունների աշխատանքը զործնականո-
ւեն դեկավարելու համար կոմյերիտմիու-
թյան շրջկոմներում, քաղկոմներում, մարդ-
կոմներում, յերկրկոմներում և աղղային
հանրապետությունների կենտկոմներում

ստեղծվում են պիոներների բաժիններ, իսկ
կոմյերիտմիության սկզբնական կազմակեր-
պությունների կոմիտեները պատանի պիո-
ներների ջոկատներն ու ֆորպատճերը ղե-
կավարելու համար ղեկավարներ են առանձ-
նացնում լավագույն, դրագետ և հեղինա-
կավոր կոմյերիտականների միջից :

Կոմյերիտական կազմակերպությունները
ջոկատների ղեկավարներին ողնում են ման-
կական ու պիոներական զանազան խմբակ-
ների համար ղեկավարներ ընտրելու գոր-
ծում :

Կոմյերիտական կազմակերպությունները
պետք ե ամենորյա հոգատարություն ունե-
նան պիոներական ջոկատների և Փորպատճ-
եների աշխատանքի նկատմամբ, պրոֆմիու-
թյունների և ժողովրդական լուսավորու-
թյան մարմինների հետ միասին կազմակեր-
պական-նյութական բազա ապահովելով
պիոներական ճամբարների, ակումբների,
սպորտ-համապարակների, թատրոնների, ման-
կական տեխնիկական ու տուրիստական կա-
յանների և այլնի աշխատանքի համար :

Համլկթեմ-ի կենտկոմը, կոմյեքիտմիության մարզկոմները, յերկրկոմները և ազգային հանրապետությունների կենտկոմները հրատարակում են պիոներական թերթեր, ժուռնալներ և մանուկների համար անհրաժեշտ գրականություն :

III

ԿՈՄՅԵՐԻ ՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

16. Կոմյերիտմիության բարձրագույն որդանն և համամիութենական համագումարը :

Հերթական համագումարները հրավիրվում են առնվազն յերեք տարին մեկ անդամ :

Արտակարդ համագումարներ հրավիրվում են Համլկթեմ-ի կենտրոնական կոմիտեյի կողմից՝ իր սեփական նախաձեռնությամբ կամ կոմյերիտմիության վերջին համագումարում ներկայացված անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ յերրորդի պահանջով :

Համամիութենական համագումարի հրավիրումը և նրա որակարգը հայտարարվում են վոչ ուշ քան համագումարը հրավիրելուց մեկ և կես ամիս առաջ :

Արտակարդ համագումարները հրավիրվում են յերկու ամսվա ընթացքում :

Համամիութենական համագումարի ներկայացուցչության նորման սահմանում և կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեն :

17. Այն գեղագում, յեթե Համլկթեմ-ի կենտրոնական կոմիտեն 16-րդ կետում մատնանշված ժամկետում արտակարդ համագումար չի հրավիրում, այն կազմակերպությունները, վորոնք պահանջել են արտակարդ համագումար հրավիրել, իրավունք ունեն ստեղծել արտակարդ համագումարը հրավիրող կազմակերպական կոմիտե, վորն ոգտվում և կենտրոնական կոմիտեյի իրավունքներով :

18. Համագումարը —

ա) լսում ու հաստատում և կենտկոմի ու

Կենտրոնական Վեբստուգիչ Համաձնաժողովի
հաշվետվությունները.

բ) վերանայում և փոփոխության և յեն-
թարկում ՀամլկՅԵՄ-ի ծրադիրն ու կանո-
նալբությունը.

գ) նշում և կոմյերիսմիության աշխա-
տանքի ընդահուր դիմք և միության հեր-
թական խնդիրները.

դ) ընտրում և ՀամլկՅԵՄ-ի Կենտրոնա-
կան կոմիտե և Կենտրոնական Վեբստուգիչ
Համաձնաժողով:

19. ՀամլկՅԵՄ-ի Կենտրոնական կոմի-
տեն և Կենտրոնական Վեբստուգիչ Համա-
ձնաժողովն ընտրվում են Համագումարի
համատառած կազմով։ Կենտրոնական կոմի-
տեյի անդամների հեռանալու դեպքում կո-
միտեյի կաղմը լրացվում և Համագումարի
ընտրած թեկնածուների թվից, Համագու-
մարի սահմանած կարգով։

20. Համագումարի կությունական համագումարնե-
րի միջև ընկած ժամանակամիջոցում միու-
թյան բարձրագույն որդանն և հանդիսա-

նում՝ ՀամլկՅԵՄ-ի Կենտրոնական կոմի-
տեն։

Կենտրոնական վեբստուգում և կոմյերիսմիու-
թյան ամբողջ աշխատանքը, ներկայացնում
ՀամլկՅԵՄ-ը պետական հիմնարկներում ու
կազմակերպություններում, նշանակում և
միության կենտրոնական որդան «Կոմսո-
մուկայա Պրավդա»-յի իմրագրությունը
և ՀամլկՅԵՄ-ի Կենտրոնական մյուս հրատա-
րակությունների խմբագրությունները,
բաշխում և միության ուժերն ու միջոցները
և վերահսկում նրանց։

21. ՀամլկՅԵՄ-ի Կենտրոնական կոմի-
տեյի պլենումները հրադիրվում են առնը-
վազն չորս ամիսը մեկ անգամ։

Կենտրոնական պլենումները կենտրոնական մասնակցում
կենտրոնական պլենումների նիստերին մասնակցում
են խորհրդագալական ձայնի իրավունքով։

22. Կոմյերիսմիության Կենտրոնական պլե-
նումը կենտրոնական պլենումների միջև ընկած
ժամանակամիջոցում միության ամբողջ աշ-
խատանքը ղեկավարելու համար իր կադ-
մից ընտրում և կենտրոնական բյուրո և կադ-

մակերպական-գործադիր բնույթի ընթացիկ աշխատանքների համար—քարտուղարություն՝ կենտկոմի կողմից վարուշած կազմով։ Կոմյերիտմիության կենտկոմը կանոնավոր կերպով ինֆորմացիա յետալիս կոմյերիտական կազմակերպություններին՝ իր աշխատանքների մասին։

23. Հետ մնացող առանձին բնադրավառականաւում կոմյերիտական աշխատանքն ուժեղացնելու նպատակով Համկանչելի-ի կենտրոնական կոմիտեն նշանակում են կոմյերիտական կազմակերպիչներ, վորոնք աշխատում են նրա անմիջական դեկավարության ու վերահսկողության տակ։

24. Այսուեղ, վորտեղ կան քաղաքական բաժիններ (խորհանուեսություններ, ջրային և յերկաթուղային տրանսպորտ, Հյուսիսային ծովային ճանապարհ և այլն) կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքը զեկավարում են քաղաքադինների պետերի՝ կոմյերիտական աշխատանքի դժուռներականները, վորոնց ընտրում և հաստատում են Համկանչելի կենտկոմը։

Քաղաքաժինների պետերի՝ կոմյերիտամիության գծով ողնականներն անմիջականորեն յենթարկվում են Համկանչելի կենտկոմին և զեկավարվում են քաղաքաժինների ու քաղաքարչությունների համապատասխան պետերի կողմից։

25. Կենտրոնական վերստուգիչ Հանձնաժողովն ստուգման ենթարկում՝

ա) գործերը վարելու արագությունն ու ճշտությունը կոմյերիտմիության կենտրոնական մարմիններում և Համկանչելի կենտկոմի ապահատի կանոնավորությունը։

բ) Համկանչելի կենտկոմի դրամարկղը և բյուջեի կատարումը։

26. Համկանչելի կենտկոմում ստեղծվում են կոմյերիտմիության մեջ ընդունող և կոմյերիտմիությունից հեռացնող Հանձնաժողով, վորն աշխատում են անմիջականորեն Համկանչելի կենտկոմի զեկավարությամբ, զբաղվում են կոմյերիտմիության մեջ ընդունելու, կոմյերիտամիությունից հեռացնելու հարցերի և միութենական տույժի յեն-

թարկելու վերաբերյալ ներկայացված բո-
ղոքների քննարկմամբ :

IV

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ,
ՄԱՐԶԱՅԻՆ ՈՒ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱ-
ԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

27. Մարզային, յերկրային, հանրապե-
տական կոմյերիտական կազմակերպության
լարձրագույն ոսկանն է կոմյերիտմիության
մարդային, յերկրային կոնֆերենցիան կամ
ազգային հանրապետության կոմյերիտմիու-
թյան համագումարը, իսկ դրանց միջև
լնկած ժամանակամիջոցում —մարզային,
յերկրային կոմիտեն, ազգային հանրապե-
տության կաթեռնորդը :

Իրենց գործունեյության ընթացքում նր-
անք ղեկավարվում են Լենինյան կոմու-
նիստական Յերիտասարդական Միության
համամիութենական համագումարների և
Համկաթեռնորդիության մարդկոմներով :
Կոմյերիտմիության մարդկոմները, յեր-

կրպկոմները, ազգային հանրապետություն-
ների կաթեռնորդները հաշվետու յեն
Համկաթեռնորդի կենտկոմի սուաջ, Համկաթե-
ռնորդյան կենտկոմի սահմանած կարգով :

28. Հերթական մարզային, յերկրային
կոնֆերենցիա կամ ազգային հանրապետու-
թյան կաթեռնորդը համագումար հրավիրում են
մարզային, յերկրային կոմիտեն, ազգային
հանրապետության կաթեռնորդը մեկ
և կես տարին մեկ անգամ, իսկ արտակարգ
կոնֆերենցիա կամ համագումար հրավիր-
վում է կոմյերիտմիության մարզային, յեր-
կրային կոմիտեյի, ազգային հանրապետու-
թյան կաթեռնորդի վորոշմամբ, կամ
թե տվյալ մարզի, յերկրամասի, հանրապե-
տության կազմակերպության անդամների
ընդհանուր թվի առնվազն մեկ յերրորդի
պահանջով :

Կոմյերիտմիության մարզային, յերկրա-
յին կոնֆերենցիայի, ազգային հանրապե-
տության կաթեռնորդը համագումարի ներկայա-
ցուցչության նորման սահմանում են
կաթեռնորդ մարզային, յերկրային կոմիտե-

ները, աղդային հանրապետության կենտրոն:

Մարզային, յերկրային կոնֆերենցիան, աղդային հանրապետության լկթեմ համագումարը լսում ե քննարկում և Համլկթեմ աշխատանքի ընդհանուր հարցերը, լսում և հաստատում ե մարզային, յերկրային կոժիտեյի, աղդային հանրապետության լկթեմ կենտրոմի և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետու զեկուցումները, քննության ե առնում մարզում, յերկրամասում, հանրապետության մեջ կատարվելիք կոմյերիտական աշխատանքի հարցերը և ընտրում ե մարզային, յերկրային կոմիտե, լկթեմ կենտրոմ, վերստուգիչ հանձնաժողով և կոմյերիտամիության համամիութենական համագումարի պատգամավորներ:

29. Մարզային, յերկրային կոմիտեն, աղդային հանրապետության լկթեմ կենտրոնը նշանակում ե իր վերահսկողության տակ աշխատող կոմյերիտական որդանների խմբագրությունները, զեկալարում ե ստորադաս կազմակերպությունների աշխատան-

քը, կոմյերիտմիությունը ներկայացնում ե կռասակցական-իորդարդային, պլրոֆմիութենական ու այլ կազմակերպություններում, յերկրամասի, մարզի, հանրապետության կոմյերիտական կազմակերպությանն ինֆորմացիա յետալիս իր աշխատանքի մասին, իր կազմակերպության սահմաններում բաշխում ե կոմյերիտամիության ուժերն ու միջոցները:

30. Մարզային, յերկրային կոմիտեյի, աղդային հանրապետության լկթեմ կենտրոմի պլենում հրավիրվում ե ասովազն յերեք ամիսը մեկ անգամ:

31. Մարզային, յերկրային կոմիտեն, աղդային հանրապետության լկթեմ կենտրոնը ընթացիկ աշխատանքի համար ընտրում ե բյուրո:

Մարզային, յերկրային կոմիտեի և աղդային հանրապետությունների լկթեմ կենտրոնների քարտուղարների համար պարտադիր ե հետեյալ կուսակցական և կոմյերիտական ստաժը.

բանվորների համար՝ Համլկթեմ Միության

ստաժ—5 տարվա և Համեկ(բ)կ ստաժ—4
տարվա,

մյուսների համար՝ ՀամեկօթեՄ-ի ստաժ—
6 տարվա և Համեկ(բ)կ ստաժ—5 տարվա:

Ծանոթություն.—Երկրամասների ու
հանրապետությունների մեջ մտնող
մարզկոմների, ազգային հանրապետու-
թյունների լկօթեՄ կենտկոմների քար-
տուղարների համար պարտադիր և հե-
տևյալ կուսակցական ու կոմյերիտական
ստաժը.

բանվորների համար՝ ՀամեկօթեՄ-ի
ստաժ—4 տարվա և Համեկ(բ)կ ստաժ—
3 տարվա,

մյուսների համար՝ ՀամեկօթեՄ-ի ստաժ
—5 տարվա և Համեկ(բ)կ ստաժ—4 տար-
վա:

32. Երկրամասների ու հանրապետու-
թյունների կազմի մեջ մտնող ազգային և
այլ մարզերի ու ինքնավար հանրապետու-
թյունների կոմյերիտական կազմակերպու-
թյուններն աշխատում են յերկրային կո-
միտեների, ազգային հանրապետություն-

ների լկօթեՄ կենտկոմների զեկավարու-
թյամբ և իրենց ներքին կյանքում զեկա-
վարվում են կոմյերիտմիության յերկրա-
յին, մարզային, հանրապետական կազմա-
կերպությունների մասին ՀամեկօթեՄ-ի կա-
նոնադրության 4-րդ դիմումը շարադրված
գրույթներով:

Վ

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՈԿՐՈՒԳԱՅԻՆ, ՔԱ-
ՂԱՔԱՅԻՆ ՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐ-
ՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

33. Քաղաքային, ոկրուգային, շրջանա-
յին կոմյերիտական կոնֆերենցիա հրավիր-
վում և կոմյերիտմիության քաղաքային,
ոկրուգային, շրջանային կոմիտեյի կողմից
առնվազն մեկ և կես տարին մեկ անդամ՝
արտակարգ կոնֆերենցիա հրավիրվում և
քաղաքային, ոկրուգային, շրջանային կո-
միտեյի վորոշմամբ, կամ թե քաղաքային,
ոկրուգային, շրջանային կազմակերպության
մեջ մտնող կազմակերպությունների ան-

գամների ընդհանուր թվի առնվազն մեկ
յերրորդի պահանջով :

Քաղաքային, ոկրուգային, ըրջանային
կոնֆերենցիան լսում և հաստատում ե քա-
ղաքային, ոկրուգային, ըրջանային կոմի-
տեյի, վերստուգիչ հանձնաժողովի հաշվե-
տվությունները, ընտրում ե քաղաքային,
ոկրուգային, ըրջանային կոմիտե, վերստու-
գիչ հանձնաժողով և յերկրային, մարզա-
յին կոնֆերենցիայի կամ ազգային հան-
րապետության կոմյերիտմիության համա-
գումարի պատգամավորներ :

34. Կոմյերիտմիության քաղաքային ու
ոկրուգային կոմիտեների քարտուղարների
համար պարտադիր ե կուսակցական ու կոմ-
յերիտական հետեւյալ ստաժը .

բանվորների համար՝ Համկաթեմ-ի ստաժ
—4 տարվա և Համկ(բ)կ ստաժ—2 տար-
վա,

մյուսների համար՝ Համկաթեմ-ի ստաժ—
5 տարվա և Համկ(բ)կ ստաժ—3 տարվա :

Կոմյերիտմիության ըրջանային կոմիտե-
ների քարտուղարների համար . բանվորնե-

րի համար՝ Համկաթեմ-ի ստաժ—3 տարվա
և Համկ(բ)կ ստաժ—2 տարվա, մյուսների
համար՝ Համկաթեմ-ի ստաժ—4 տարվա և
Համկ(բ)կ ստաժ—2 տարվա :

Քաղաքային, ոկրուգային ու ըրջանային
կոմիտեների քարտուղարներին հաստատում
են մարզկոմը, յերկրկոմը, կամ ազգային
հանրապետության ԼԿՑԵՄ կենտկոմը՝ Համ-
կաթեմ-ի կենտկոմի հետագա հաստա-
մամբ :

35. Կոմյերիտմիության քաղաքային, ոկ-
րուգային, ըրջանային կոմիտեն ընտրում ե
բյուրո, կազմակերպում և հաստատում ե
ձեռնարկություններում, խորհում կառ-
թյուններում, մեքենա-տրակտորային կա-
յաններում, կոլտնտեսություններում ու
գպացներում կոմյերիտական սկզբնական
կազմակերպություններ, դեկալարում ե
քաղաքի կամ ըրջանի բոլոր սկզբնական
կազմակերպությունների աշխատանքը, կո-
տարում ե կոմյերիտականների հաշվառում,
քաղաքի ու ըրջանի սահմաններում բաշխում
և կոմյերիտական կազմակերպության ուժի-

րըն ու միջոցները, խորհրդային, անտեսական ու արձեստակայան կազմակերպություններում հանդես ե գալիս վորապես կոմյերիտմիության ներկայացուցիչ:

Կոմյերիտմիության քաղաքային, ոկրուգային, ըրջանային կոմիտեն իր զործունեյության մասին հաշվետվություններ և ներկայացնում քարզային, յերկրային կոմիտեյին, ազգային հանրապետության կազմում կենտկոմին ըստ ՀամլկազեՄ-ի կենտկոմի սահմանած ժամկետների ու ձեւ:

Քաղաքային, ոկրուգային, ըրջանային կոմիտեյի պլենումը հրավիրվում ե առնվազըն յերկու ամիսը մեկ անդամ:

VI

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈԳ- ՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՄՍԻՆ

36. Կոմյերիտմիության հիմքը կոմյերիտական սկզբնական կազմակերպություններն են:

Կոմյերիտական սկզբնական կազմակերպություններ ստեղծվում են Փարբիկա-

ներում, զորձարաններում, մէքենա-արակ-տորային կայաններում, խորհտնտեսություններում և այլ տնտեսական ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, զյուղերում, հիմնարկություններում, քարձրագույն ուսումնական հաստատություններում, զպրոցներում, կարմիր-բանակային զորամասերում և այլն, կոմյերիտմիության առնվազն յերեք անդամի առկայության դեպքում:

Կոմյերիտական սկզբնական կազմակերպությունները հաստատվում են ՀամլկազեՄիության շրջանային կամ քաղաքային կոմիտեյի կողմից:

37. Խոշոր ձեռնարկություններում, հիմնարկություններում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, զպրոցներում, կոլտնտեսություններում, վորտեղ 100 և ավելի կոմյերիտականներ կան, ամբողջ ձեռնարկությունը, հիմնարկը և այլն ընդգրկող կոմյերիտական սկզբնական կազմակերպության ներսում (յուրաքանչյուր առանձին զեպքում) շրջ-

կոմի, քաղկոմի հաստատությամբ) կարող են կազմակերպվել ցեխային, տեղամասային, բաժնի, Փակուլտետային և այլ կոմիերիտական կազմակերպություններ : Ցեխային, տեղամասային և այլ կազմակերպությունների ներսում, իր հերթին, կարող են ստեղծվել կոմիերիտական խմբակներ :

38. Ընթացիկ աշխատանքները կատարելու համար կոմիերիտական սկզբնական կազմակերպությունն ընտրում ե կոմիերիտական կոմիտե (կոմիերիտմիության դորձարանային կոմիտե, Փարկոմ և այլն) մեկ տարի ժամանակով, իսկ ցեխային կազմակերպությունը —ցեխային կոմիերիտական կազմակերպության բյուրո կամ կոմիերիտական կազմակերպիչ՝ վեց ամիս ժամանակով :

Կոմիերիտմիության 10 անդամից պակասունեցող սկզբնական կոմիերիտական կազմակերպություններում կոմիերիտական կոմիտեներ չեն ստեղծվում, այլ ընտրվում ե կոմիերիտմիության սկզբնական կազմակերպության քարտուղար :

Բանվորա-գյուղացիական կարմիր բանակի կոմիերիտական սկզբնական կազմակերպություններում ընտրվում ե վոչ թե կոմիտե, այլ բյուրո :

Կոմիերիտական սկզբնական կազմակերպություններում, իբրև կանոն, աշխատանքը կատարվում ե արտադրությունից չափատված աշխատողների միջոցով : Աղատված աշխատողներ կարող են առանձնացվել միայն սկզբնական կազմակերպությունների առավել խոշոր կոմիտեներում՝ Համկաթեմիության կենտկոմի թույլավությամբ :

39. Տեղական պլոֆմիութենական և այլ հասարակական կազմակերպությունների հետ կապ պահպանելու համար կոմիերիտական սկզբնական կազմակերպությունն առանձնացնում ե իր ներկայացուցիչներին :

VII
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԿԱԶ-
ՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

40. Կարմիր բանակում Համկաթեմ-ի կազմակերպությունների կատարած ամբողջ աշ-

խատանքը կուսակցական-քաղաքական աշխատանքի անբաժանելի մասն եւ կատարվում եւ քաղորդանների, Կարմիր բանակի զորամասերի զինվորական կոմիսարների ու կուսակցական կազմակերպությունների անմիջական ղեկավարությամբ:

Կոմյերիտմիության ղեկավար մարմինների (շրջկոմ, քաղկոմ, մարզկոմ) և բանկորա-գյուղացիական Կարմիր բանակի քաղորդանների վորոհարաբերությունը վորոշվում եւ ՀամԼԿՅՅԵՄ-ի կենտկոմի և բանկորա-գյուղացիական Կարմիր բանակի Քաղվարչության մշակած հատուկ կանոնադրությամբ:

41. Կարմիր բանակի կոմյերիտական կազմակերպությունների իրավունքները, պարտականություններն ու աշխատանքը վորոշվում են ՀամԼԿՅՅԵՄ-ի կենտկոմի և բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի Քաղվարչության մշակած հատուկ կանոնադրությամբ:

VIII

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԿՈՄՅԵՐԻՑՄԱՆ ԿԱՍՄԱՄԲ

42. Լենինյան կոմյերիտմիությունն իրամբողջ աշխատանքը կատարում եւ Համ. Կ(ր)Կ-ի անմիջական ղեկավարությամբ: ՀամԼԿՅՅԵՄ-ի կենտկոմը հանդիսանալում միության ղեկավար որդանը, անմիջականորեն յենթարկվում եւ ՀամԿ(ր)Կ կենտկոմին: ՀամԼԿՅՅԵՄ-ի տեղական կազմակերպությունների աշխատանքին ուղղություն են տալիս և վերահսկողության են յենթարկում համապատասխան մարզային, յերկրային, հանրապետական, քաղաքային ու շրջանային կուսակցական կազմակերպությունները:

IX

ԿՈՄՅԵՐԻՑՄԱՆ ԿԱՊԸ ՊՐՈՖՄԻՌԵՆՑԱԿԱՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՅՑԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

43. Համատեղ աշխատանք կատարելու

Համար Համկանք ԵՄ-ի կազմակերպություններն իրենց ներկայացուցիչներն են առանձնացնում պրոֆմիությունների մեջ, ժողովրդական կը թության մարմիններում և յերիտասարդության շահերի հետ կապված շխատանք կատարող այլ հիմնարկություններում :

44. Կոմյերիտմիության ներկայացուցիչները պրոֆմիություններում, խորհրդային և այլ կազմակերպություններում կենսադործում են կուսակցության, կոմյերիտմիության վորոշումները, հետևում են յերիտասարդությանը վերաբերող կառավարական որենքների կատարմանը, մասնակցում են համապատասխան կազմակերպությունների ընդհանուր աշխատանքներին և իրենց աշխատանքի մասին կանոնավոր հաշիվ են տալիս իրենց ուղարկող կոմյերիտական կազմակերպություններին :

¶

ՆԵՐՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՅԵՎ,
ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

45. Իր կազմակերպության կամ ամբողջ կոմյերիտմիության աշխատանքի բոլոր հարցերի աղատ ու գործնական քննարկությը Համկանք ԵՄ-ի յուրաքանչյուր անդամի անկապտելի իրավունքն է :
Ինքնաքննադատությունը կոմյերիտմիության ամբողջ աշխատանքի մեջ պետք են ծավալվի առանց ով լինելը նկատի առնելու, այնպես, վոր կոմյերիտմիության անդամները քննադատեն իրենց ընտրովի որդանները քննադատեն իրենց ընտրովի որդանների աշխատանքը, իրենց ղեկավարների աշխատանքը, ղեկավարությունից հեռացնելով արին, ղեկավարությունից հեռացնելով անուղղելի շաղակարաններին և ու գործնուղղելի շաղակարաններին կոմյերիտական կազմակերպություններին :

Կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքի հարցերի աղատ ու գործնական քննարկությը պետք են ուղղված լինի կամ քննարկությը պետք են ուղղված լինի

կուսակցության վորոշումների ե'լ ավելի
լավ իրականացման, կոմյերիտմիությանը
կուսակցության չուրջն ե'լ ավելի համա-
խմբելու նպատակին: Սակայն միութենա-
կան կյանքի բոլոր վիճելի հարցերի քննար-
կումն ազատ ե միայն մինչև կազմակեր-
պության կողմից համապատասխան վորո-
շում ընդունելը:

46. Կոմյերիտական կարգապահության
ամենախիստ պահպանումը կոմյերիտմիու-
թյան բոլոր անդամների ու բոլոր կոմյերի-
տական կազմակերպությունների ամենա-
առաջնակարգ պարտականությունն է:

Յուրաքանչյուր կոմյերիտական կազմա-
կերպություն, յուրաքանչյուր կոմյերիտա-
կան, առավել ևս միության ակտիվ աշխա-
տող, պետք ե ճշգրիտ կերպով, արագորեն
ու անթերի կասարեն կուսակցական ու կոմ-
յերիտական մարմինների վորոշումները:
Կոմյերիտականները պարտավոր են որինա-
կելիորեն կատարել խորհրդային կառա-
վարության վորոշումները և նրա բո-
լոր մարմինների ցուցումները:

Կոմյերիտմիության դեկավար մարմին-
ների անդամները պետք ե յերկաթե կար-
գապահության որինակ ցույց տան կոմյե-
րիտմիության մեջ և աչալուրջ պահպանն
միության համախմբվածությունն ու միաս-
նությունը: Կեկավար կոմյերիտական մար-
մինների այն անդամների նկատմամբ, ով-
քեր կիսախտեն այս պահանջը, պետք ե կի-
րառվեն միութենական տույժի բոլոր մի-
ջոցները, ընդհուպ մինչև կոմյերիտմիու-
թյունից վտարելը, իսկ Համլկօնեմ-ի կենտ-
կոմի անդամների նկատմամբ—վիխսադրումը
կենտկոմի թեկնածու, վտարումը կենտկո-
մի կազմից և իբրև ծայրահեղ միջոց՝ վտա-
րումը կոմյերիտմիությունից: Այսպիսի
տույժերի կարող ե յենթարկել միայն այն
կոմիտեյի պլենումը, վորի անդամն և հան-
դիսանում միության կարգապահությունը
խախտողը, կամ թե կոմյերիտմիության
վերադաս կոմիտեն:

47. Վերադաս կազմակերպությունների
վարչումները չկատարելու և այլ զան-
ցանքների հետևանքը կարող են հանդիսա-

նալ՝ կազմակերպությունների համար — պարսպավանք և ընդհանուր վերացուցակագրում (կաղմակերպության ցըռում)՝ մարդկոմի, յերկրկոմի, աղջային հանրապետության ԼԿՅԵՄ կենտկոմի սանկցիայով։ կոմյերիտմիության առանձին անդամների համար — պարսպավանքի այս կամ այն տեսակը (հանդիմանություն, նկատողություն և այլն), հասարակական պարսպավանք, գեղավար կոմյերիտական աշխատանքից ժամանակավորապես հեռացնելը. համապատասխան կուսակցական, խորհրդային ու այլ կազմակերպությունների առաջ՝ այդ կաղմակերպություններում կատարած պատասխանատու աշխատանքից հեռացնելու ժամանին հարց գնելը. կոմյերիտմիությունից հեռացնելը. կոմյերիտմիությունից հեռացնելը՝ զանցառության մասին վարչական ու դատական իշխանություններին հայտնելով։

Ծանօթություն. — ՀամլԿՅԵՄ-ի այն անդամները, վորոնք միևնույն ժամանակ Համկ(բ)կ-ի անդամներ կամ թեկնածուներ են, կոմյերիտմիության մեջ անդամավճար մուծելուց աղատովում են։

Թասիսանատու յեն ինչպես կուսակցական, այնպես և կոմյերիտական կաղմակերպությունների առաջ։

XII

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

48. Կոմյերիտմիության դրամական միջոցները կազմվում են անդամավճարներից և այլ մուտքերից։

Ծանօթություն. — ՀամլԿՅԵՄ-ի այն անդամները, վորոնք միևնույն ժամանակ Համկ(բ)կ-ի անդամներ կամ թեկնածուներ են, կոմյերիտմիության մեջ անդամավճար մուծելուց աղատովում են։

49. ՀամլԿՅԵՄ-ի բոլոր անդամներն ու թեկնածուները (այդ թվում նաև Համկ(բ)կ-ում յեղածները) ամեն տարի վճար սում են ուղղմաշեփական անդամավճար և ինտերնացիոնալ անդամավճար ՀամլԿՅԵՄ Միության կենտկոմի սահմանած չափով։

50. Կոմյերիտմիության թեկնածու կամ

անդամ ընդունելու ժամանակ մուտքի վճար
դանձվում է անդամավճարի ամսական գու-
մարի կրկնակի չափով:



Թարգմ. Հ. Թաւրյան

Խմբագրեցին՝ Ա. Շահումյան
Տեխն. խմբ. Ա. Խաչատրյան
Մրբագրիչ Ա. Տեր-Մկրտչյան
Կոնսոր. սրբ. Լ. Արովյան

Գլուխտիտի լիազոր Ի. 4883, հրատ. № 446,

Պատագել Ա. 79, տիրաժ 10,000, ինդեքս ^{ուշ} PK -

Հանձնված և արտադրության 27/V 1937 թ.

Ստորագրված և տպագրության 20/V 1937 թ.

Գինը 50 կ.

Հայկուսնըատի տպարան,
Յերևան, Ալահինիդյան Հ. 71

ՀՀ Ազգային գրադարան



NL0191371

